

նայն դէպս մտքի ու հոգու աւելի շեշտուած անկախութեամբ:

Այս համեստ տուրքը հեղինակի անձնաւորութեանը հատուցելէ յետոյ, դիմենք անոր պատմափիլիսոփայական մարզանքներուն: Վասնզի ան չի գոհանար լոկ դէպքերը պատմելով, այլ աւելի բարձր- ինքնին գովելի — յաւակնութիւն մ'ունի, կ'ուզէ հայոց պատմութեան փիլիսոփայ լինիլ. անոր հիմնական մտահոգութիւնն է, ինչպէս ինքն իսկ կը գրէ յառաջաբանի մէջ, — «Ճանաչել հայութեան հաւաքական դէմքն...ընդգրկել մեր պատմութեան իմաստը, ճանաչել իրերն իրանց յարափոփոխ վիճակում եւ յաջորդականութեան թել հիւսել դարափարնների համար»:

Եւ այդ ծանրակշիռ աշխատանքը նա պիտի ընէ՝ «մարքսիստական մտածողութեամբ գլխոււում»:

Քսան տարիէ ի վեր հայ սօցիալ-դէմօկրատներու գրականութեան մէջ շատ գոհարներ տեսած ենք այդ «մարքսիստական մտածողութեան», ուստի Անանունի այդ գիրքը թերթելիս, հետաքրքրութեան հետ միասին առաջին իսկ էջերէն մեզի կը պաշարէ սկեպտոսութեան, թերահաւատութեան զգացումը: Ամէն պարագայի տակ հեղինակը վճռականօրէն կը խոստանայ անաչառ լինել: Վասնզի, կ'ըսէ, «պատմութիւնը նախ եւ առաջ անաչառութիւն է»...

Այդ գեղեցիկ յայտարարութեանը քիչ թէ շատ հաւատարիմ մնալու մտահոգութեամբ, կը գրէ ակամայ շարք մը ճշմարտութիւններ հայ ազգ. շարժման ու անոր կրող Հ. Յ. Դաշնակցութեան մասին, ինչպէս նաեւ այդ կուսակցութեան վրացի ու այլ հակառակորդներու մասին:

Դաշնակցութիւնը եւ հայ ազգային շարժումը իրենց լոյսերով ու ստուերներով, դրական եւ բացասական կողմերով դեռ կը սպասեն իրենց անաչառ եւ ձեռնհաս պատմագրին. բայց այժմէն իսկ հարկ է արձանագրել այն հազուադէպ դրուատողական բառերը, որ մերթ ընդ մերթ ժլատօրէն հրապարակ կը նետուին հակառակորդ կողմերէն՝ այդ կուսակցութեան աշխատանքի այլեւայլ դրուագներու մասին:

Հայ թաթարական ընդհարումներու առ-

թիւ Դ. Անանուն — որ կը գրէ իրբեւ իրազեկ եւ շատ դէպքերու ականատես — չի տար, ի հարկէ, պատշաճ դնահատական մը, բայց կը վկայէ հետեւեալը.

«Ինքնապաշտպանութեան համար զէնք ձեռք բերելու գործում հայերից ամէն ոք կամ թողնուած էր իր ճակատագրին ու անձնական կորովին կամ թէ այդ հոգսն իր վրայ էր առնում Հ. Յ. Դաշնակցութիւնը: Միւս յեղափոխական կազմակերպութիւնները նոյնպէս զէնքի հոգս էին քաշում, բայց նրանց աշխատանքն այդ ասպարէզում նշմարելի չէր դառնում: Հ. Յ. Դաշնակցութիւնն էր, որ իր գործակալներով Ռուսաստանի եւ Հիւսիսային Կովկասի քաղաքներէց հազար ու մի արգելք յաղթահարելով զէնք ու ռազմամթերք էր հասցնում ժողովրդին»\*):

Ապա հետեւեալը Սարտարապատի եւ Ղարաքելիսի հերոսամարտի մասին.

«Ճիշդ է, Ազգային Խորհրդի կազմած դորքը պանծալի նկարագիր չցուցահանեց էրզրումում եւ Կարսում, բայց դա մասամբ տեղի ունեցաւ նրա հրամանատարական կազմի ու զեկազմների ասիկարութեան եւ մասամբ էլ այն հակասական թեյադրանքների շնորհիւ, որ դալիս էին Այսրկովկասի կառավարութիւնից: Մինչեւ օրս էլ պարզ է, թէ որպիսի դեր է կատարել կառավարութեան գլուխ Չիսենկեի Վարսի յանձման գործում: Բայց հէնց որ թուրքական նուաճողական ասորթակն անկըտում դարձաւ եւ ժողովրդական տարերքը հանդէս եկան դիմադրելու նուաճողներին, հայ դորքը քաջութեան եւ անվահերութեան փառաւոր ասպոյցներ տուաւ: Այդպիսի էին նրա կռիւները թուրք գորքի հետ Սարդարապատում մայիսի 22-23-ին եւ Ղարաքելիսում մայիսի 25-26-ին: Այս կռիւներն էին եւ ոչ թէ գութն ու մարդասիրութիւնը, որ հարկադրեցին Թուրքիայի Բաթումում՝ Կողմն ճանաչել նաեւ հայերին եւ հաշտութեան դաշինք կնքել Ազգային Խորհրդի ներկայացուցիչների հետ»\*):

Ահա մի քանի տող հայոց անկախ Հանրապետութեան մասին.

\*) էջ 181  
\*) էջ 682